



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 30 » հունվարի 2026 թվականի N 210-Ա

ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՌՈՒՔԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ
ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՕՂԱԿ 2/2 ՀԱՍՑԵՌՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
(ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ռուբեն Գևորգյանի 2026 թվականի հունվարի 15-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հունվարի 15-ին 437-2026 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Ռուբեն Գևորգյանին Գյումրի քաղաքի Բագրատունյաց օղակ 2/2 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1,5 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2026 թվականի հունվարի 15-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Ռուբեն Գևորգյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 30 » հունվարի 2026 թվականի N 209-Ա

**<<ԻՄԻՋ Մ.Գ.>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ
ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Իմիջ Մ.Գ.>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի հունվարի 13-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հունվարի 20-ին 640-2026 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Իմիջ Մ.Գ.>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Գյումրի քաղաքի տարածքում տեղադրված առկա վահանակների վրա տեղադրել (տեղաբաշխել) արտաքին գովազդի պաստառ ընդհանուր 311,28 քմ մակերեսով՝ համաձայն հավելվածի:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2026 թվականի հունվարի 01-ից մինչև 2026 թվականի հունվարի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Իմիջ Մ.Գ.>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Ա. Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

☒ Восстановить подпись

X _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

Подписано: ARAKELIAN AVETIS 3910650278

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի





Հավելված
Հայաստանի Հանրապետության
Ծիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավարի պաշտոնակատար

2026 թ. հունվարի 30-ի

N 209-Ղ որոշման

ՑՈՒՑԱԿ

<<ԻՄԻՋ Մ. Գ.>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ (ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ) ՀԱՍՑԵՆԵՐԻ

Հ/Հ	ԳՈՎԱԶԴՄԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ	Քանակ	(քառ. մ)
1	Երևանյան փողոց	1	18
2	Մ.Խոթրենացի փ.,- Մայիսյան խչմ.,	2	36
3	Գ. Նժդեհ գույպայի ֆաբրիկայի մոտ	1	18
4	Ծիրակի փ., Խաղաղության հրապ.,	1	18
5	Գորկու փ. Team-ի դիմաց,	2	36
6	Սայաթ-Նովա փ., Ակադեմիայի դիմաց,	1	18
7	Սայաթ-Նովա փ., ԱԲ կողմ,	2	36
8	Սայաթ-Նովա 7, Ա կողմ,	1	18
9	Վարդանանց հր., 4 Սքրոլեր,	8	17,28
10	Ռիժկովի փ. 22 սքրոլեր	44	96
	ԸՆդամենը	63	311,28



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 30 » հունվարի 2026 թվականի N 208-Ա

**<<ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԿՈՒ 50/8 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴԻԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Կիրակոսյաններ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի հունվարի 20-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հունվարի 20-ին 662-2026 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Կիրակոսյաններ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Գյումրի քաղաքի Գորկու 50/8 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 2,2 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2026 թվականի հունվարի 20-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Կիրակոսյաններ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Վահե Կիրակոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



☒ Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
 Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
 Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 30 » հունվարի 2026 թվականի N 204-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 824-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 30-ի «Քաղաքացի Սուրեն Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գոգոյի փողոց N 4 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 418.76 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները օրինական ճանաչելու եվ սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 316.39 քառակուսի մետր մակերեսով հողամասի եվ նրա վրա առկա ինքնակամ շինության, ինքնակամ փակված 1 պատուհանի կարգավիճակի մասին» N 824-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու անհրաժեշտություն է առաջացել (հիմք՝ ըստ գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների վերաբերյալ N 15-19102021-08-1099 ՀՀ կադաստրի կոմիտեի տեղեկանք):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 30-ի «Քաղաքացի Սուրեն Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գոգոյի փողոց N 4 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 418.76 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները օրինական ճանաչելու եվ սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 316.39 քառակուսի մետր մակերեսով հողամասի եվ նրա վրա առկա ինքնակամ շինության, ինքնակամ փակված 1 պատուհանի կարգավիճակի մասին» N 824-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սուրեն Սահակյանի լիազորված անձ Սեյրան Սահակյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ



Handwritten signature



Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք.Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 30 » հունվարի 2026 թվականի № 206 Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԶԻՎԱՆՇԻՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՔԱՂԱՔ ԳՅՈՒՄՐԻ, ԴԵԿԱԲՐԻՍՏՆԵՐԻ ՓՈՂՈՑ 13Ա ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Զիվանշիր Վարդանյանի լիազորված անձ Իրինա Եղիազարյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Վարդանյանի լիազորված անձ Իրինա Եղիազարյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №476-2026 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Սեփականության իրավունքով քաղաքացի Զիվանշիր Վարդանյանին պատկանող Քաղաք Գյումրի, Դեկաբրիստների փողոց 13ա հասցեագրությամբ անշարժ գույքը վերահասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Դեկաբրիստների փողոց, 13/1 բնակելի տուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ



մմ

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 30 » հունվարի 2026 թվականի № 205 Ա

ՔԱՂԱՔ ԳՅՈՒՄՐԻ, Գ. ՆՏԴԵԿԻ ՓՈՂՈՑ 17/7 (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 05022025-08-0055),
Գ. ՆՏԴԵԿԻ ՓՈՂՈՑ 17/20 (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 03102024-08-0047), Գ. ՆՏԴԵԿԻ
ՓՈՂՈՑ 17/21 (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 03102024-08-0048) ԵՎ Գ. ՆՏԴԵԿԻ ՓՈՂՈՑ 17/22
(ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 03102024-08-0049) ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի
35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով,
Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն
որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով
քաղաքացի Սմբատ Մարտիրոսյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №751-2026 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաք Գյումրի, Գ. ՆՏԴԵԿԻ փողոց 17/7 (կադաստրային ծածկագիր 05022025-08-0055),
Գ. ՆՏԴԵԿԻ փողոց 17/20 (կադաստրային ծածկագիր 03102024-08-0047), Գ. ՆՏԴԵԿԻ փողոց 17/21
(կադաստրային ծածկագիր 03102024-08-0048) և Գ. ՆՏԴԵԿԻ փողոց 17/22 (կադաստրային ծածկագիր
03102024-08-0049) անշարժ գույքերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Գ. ՆՏԴԵԿԻ փողոց, 17/7 բնակելի տուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ



ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԽՆՈՂ՝

2026 թ. ք. Գյումրի

mlD

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ: փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 29 » հունվարի 2026 թվականի N 203 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Գ. ՀԱՆԵՍՕՂԵՅԱՆ ՓՈՂՈՑ N 1/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 30.61 ՔԱՌԱԿՈՒՄԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (21.72 ՔԱՌԱԿՈՒՄԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ 30.61 ՔԱՌԱԿՈՒՄԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Գ. Հանեսոլյան փողոց N 1/2 հասցեի 30.61(երեսուն ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով ավտոտնակը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 23062025-08-0060 վկայական):

Հաշվի առնելով, որ ավտոտնակը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 16-ի N 103-Ա որոշումը, քաղաքացի՝ Ջեմմա Առաքելյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի մայիսի 14-ին N 8387 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

- Գյումրի քաղաքի Գ. Հանեսոլյան փողոց N 1/2 հասցեի 30.61(երեսուն ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (21.72(քսանմեկ ամբողջ յոթանասունեկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով 83412 (ութսուներեք հազար չորս հարյուր տասներկու) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով ավտոտնակը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Ջեմմա Հարությունի Առաքելյանին:
- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գ. Հանեսոլյան փողոց N 1/2 հասցեի 30.61(երեսուն ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 321833 (երեք հարյուր քսանմեկ հազար ութ հարյուր երեսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Ջեմմա Հարությունի Առաքելյանին:
- Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Ջեմմա Հարությունի Առաքելյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ջեմմա Հարությունի Առաքելյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
- Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Ջեմմա Հարությունի Առաքելյանի միջոցների հաշվին:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
2026թ. ք. Գյումրի

2026-01-29 15:28:02 GMT+4
Հավանական է էլեկտրոնային կոդով



Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 30 » հունվարի 2026 թվականի № 204-Ա

ՔԱՂԱՔ ԳՅՈՒՄՐԻ, Ա. ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑ 3/26 (ՎԿԱՅԱԿԱՆ №08102024-08-0046) ԵՎ Ա.
ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑ 3/27 (ՎԿԱՅԱԿԱՆ №09122025-08-0003) ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի
35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով,
Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն
որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով
քաղաքացի Անահիտ Խաչատրյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №802-2026 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաք Գյումրի, Ա. Խանջյան փողոց 3/26 (վկայական №08102024-08-0046) և Ա. Խանջյան
փողոց 3/27 (վկայական №09122025-08-0003) հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքը
հասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Խանջյան փողոց, 3/26 հողամաս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ



ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

մԻԾ

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի



29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
 Հեռ. (+374 312) 2-22-00; Գաքս (+374 312) 3-26-06
 Էլ. փոստ gymri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 29 >> հունվարի 2026 թվականի N 202 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
<< ԱԹԼԵՏԻԿԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՍԱՄՎԵԼ ԼԵՈՆԻԿԻ ՈՒՆՈՒՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ
ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 167-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Սամվել Լեոնիկի Ունույանի 2026 թվականի հունվարի 21-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սամվել Լեոնիկի Ունույանին տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2026 թվականի փետրվարի 2-ից:
2. Ամենամյա երկարացված արձակուրդը՝ 30 աշխատանքային օր՝ 2026 թվականի փետրվարի 2-ից մինչև մարտի 7-ը ներառյալ:
3. Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Սամվել Լեոնիկի Ունույանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել կազմակերպության ուսմասվար Հովհաննես Կարապետի Ստեփանյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սամվել Լեոնիկի Ունույանին և Հովհաննես Կարապետի Ստեփանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Բ. Գյումրի



Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 29 » հունիսի 2026 թվականի N 201-Ա
2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՏՐՎԱԾ N73/18 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ
ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ավետիք Եսայանին և Ալինա Սարգսյանին Գյումրի քաղաքի Ալ. Մանուկյան փող. N 19 հասցեում բիզնես կենտրոնի երկհարկանի մասնաշենքի նոր կառուցման աշխատանքների կատարման համար 2018 թվականի դեկտեմբերի 27-ին տրվել է N73/18 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2018 թվականի դեկտեմբերի 27-ին տրված N73/18 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել մինչև ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքների ավարտը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Ավետիք Եսայանին և Ալինա Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ



ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 29 » հունվարի 2026 թվականի N 200-Ա

«ԿԱՐԱՏ ԹՐԵՅՂ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՇԱԿ ՔՈՍՅԱՆԻՆ ԱՐՈՎՅԱՆ 218/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի N° 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Կարատ Թրեյդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արշակ Քոսյանի (ՀՎՀՀ՝ 02874778, գրանցման ամսաթիվը՝ 2022 թվականի սեպտեմբերի 19-ին) 2026 թվականի հունվարի 09-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հունվարի 09-ին 153-2026 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել «Կարատ Թրեյդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արշակ Քոսյանին Գյումրի քաղաքի Աբովյան 218/1 հասցեում իրականացնել ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Կարատ Թրեյդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արշակ Քոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվական ք. Գյումրի





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ
Հեռ. (+374 312) 2-22-00; Գաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 29 » հունվարի 2026 թվականի N 199 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՅԱՆ ՎՈԼԵՅՐՈՒ ՏՂԱՄԱՐԴԱՆՑ ԵՎ ԿԱՆԱՆՑ
ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության ձյան վոլեյբոլի տղամարդկանց և կանանց 2026 թվականի հունվարի 30-ից փետվարի 1-ը Ծաղկաձոր համայնքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով վոլեյբոլի ֆեդերացիայի 2026 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2026 թվականի հունվարի 29-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության ձյան վոլեյբոլի տղամարդկանց և կանանց առաջնությանը գործողման ծախսերի 2026 թվականի հունվարի 30-ից փետվարի 1-ը Ծաղկաձոր համայնք գործուղել 4 մարզիկի և 1 մարզիչի, գործողման ծախսերի համար հատկացնել (բոլոր ծախսերը) 147.300(մեկ հարյուր քառասունյոթ հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ գործողման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործողումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ



Հանրապետության Շիրակի
Եկամտաբեր 2026 թ.
հորոշման

Համագործակցության ԼՂՀ

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության ծյան վոլեյբոլի տղամարդկանց և կանանց առաջնությանը մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների

[illegible]



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 29 » հունվարի 2026 թվականի N 198-Ա

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԼԻԼԻԹ ԱՐԱՐԱՏԻ
ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԻՐ ՈՐԴՈՒ՝ ՍԱՄՎԵԼ ԵՂԻՇԵԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2026 թվականի հունվարի 20-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Լիլիթ Արարատի Խաչատրյանը (անձնագիր՝ AL0530801, տրված՝ 05.12.2023 թվականին 016-ի կողմից) խնդրելով իրեն նշանակել խնամակալ իր անգործունակ ճանաչված որդու՝ 17 սեպտեմբերի 2001 թվականին ծնված Սամվել Եղիշեի Խաչատրյանի (նույնականացման քարտ՝ 010966133) նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 18 դեկտեմբերի 2025 թիվ ՇԴ/1024/02/25 վճռով Սամվել Եղիշեի Խաչատրյանը ճանաչվել է անգործունակ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Հոգեկան Առողջության Կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված տեղեկությունների համաձայն դիմումատուն՝ Լիլիթ Արարատի Խաչատրյանը Գյումրու նյարդահոգեբուժական և նարկոլոգիական դիսպանսերներում հաշվառման մեջ չի գտնվում (տեղեկանքները կցվում են):

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի <<Գյումրու Բնակարանների Սպասարկում>> փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված տեղեկանքի համաձայն Լիլիթ Արարատի Խաչատրյանը իր որդու՝ Սամվել Եղիշեի Խաչատրյանի հետ համատեղ բնակվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փողոց 1 թաղամաս 94/3 բնակելի տանը (հիմք՝ տեղեկանք տրված՝ 20 հունվարի 2026 թվականին):

Ելնելով անգործունակ ճանաչված Սամվել Եղիշեի Խաչատրյանի շահից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Լիլիթ Արարատի Խաչատրյանի 2026 թվականի հունվարի 20-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 679 թվագրությամբ) և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2026 թվականի հունվարի 22-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սահմանել խնամակալություն՝ Լիլիթ Արարատի Խաչատրյանին (անձնագիր՝ AL0530801) նշանակել խնամակալ թիվ ՇԴ/1024/02/25 վճռով անգործունակ ճանաչված իր որդու՝ 17 սեպտեմբերի 2001 թվականին ծնված Սամվել Եղիշեի Խաչատրյանի (նույնականացման քարտ՝ 010966133) նկատմամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլիթ Արարատի Խաչատրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ**



ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվական քաղաք Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 29 » հունվարի 2026 թվականի № 194-Ա

ՔԱՂԱՔ ԳՅՈՒՄՐԻ, Ս. ՄԱՏՆԻՇՅԱՆ ՓՈՂՈՑ 53 ՇԵՆՔ N12 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՐ 48.12 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №2/2383-2025 թվագրմամբ), շինությունների հատակագիծը ու բնութագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաք Գյումրի, Ս. Մատնիշյան փողոց 53 շենք N12 բնակարան հասցեագրությամբ 48.12 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով համայնքապատկան անշարժ գույքին պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ս. Մատնիշյան փողոց, 53 շենք, 13 բնակարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

2026 թ. ք. Գյումրի



միԾ

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Գաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gymri@gymri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 26 » Իսկուհի 2026 թվականի № 196-Ա

**ՔԱՂԱՔ ԳՅՈՒՄՐԻ, ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ԱՆՑՈՒՂԻ 27Ա ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ
ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2300857) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Սվետլանա Ղալաջյանի լիազորված անձ Իրինա Եղիազարյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №341-2026 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաք Գյումրի, Սարգսյան փողոց 2-րդ անցուղի 27ա բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2300857) վերահասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Սարգսյան փողոց, 2-րդ անցուղի, 27/9 բնակելի տուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԽՆՈՂ՝

2026 թ. ք. Գյումրի



mid

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gymri@gymri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 26 » հունվարի 2026 թվականի № 195-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 06-Ի №699-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ, ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի ապրիլի 06-ի №699-Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված բնակելի շինությանը, դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Սպենդիարովի փողոց, 16 բնակելի տուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ



Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 26 » հունվարի 2026 թվականի № 194-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Պ. ՉԱՅԿՈՎՍԿՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 65.47 ՔԱՌԱԿՈՒՄԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1223-0031-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Պ. Չայկովսկու փողոցի հարևանությամբ գտնվող 65.47 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1223-0031-ից) տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Պ. Չայկովսկու փողոց, 2/3 հողամաս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ



Handwritten signature

2026.01.26 11:10:55 GMT+4
Հասցե տված է ԷԿԵՆԳ-ի կողմից



Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Գաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 26 » հունվարի 2026 թվականի № 193-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 27.72 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0789-0016-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ գտնվող 27.72 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0789-0016-ից) տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ավտոկայանի հրապարակ, 15/8 հողամաս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԽՆՈՂ

2026 թ. ք. Գյումրի



Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Գաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 26 » հունվարի 2026 թվականի № 192-Ա

ՔԱՂԱՔ ԳՅՈՒՄՐԻ, ԱՆՏԱՌԱՎԱՆԻ 4-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 1 ՇԵՆՔ, 39 ԲՆԱԿԱՐԱՆ
ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ № 25122012-08-0229)
ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Սուրեն Հովհաննիսյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №504-2026 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաք Գյումրի, Անտառավանի 4-րդ թաղամաս 1 շենք, 39 բնակարան հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական № 25122012-08-0229) վերահասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Անտառավանի 4-րդ թաղամաս, 1ա շենք, 39 բնակարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ



Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Գաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 26 » հունվարի 2026 թվականի № 191-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 թվականի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի №3206-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ՄԱՌԱՆԻՆ, ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաքաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 16-ի №3206-Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված մառանին, դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Խրիմյան Հայրիկի փողոց, 57/2 մառան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ



ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » հունվարի 2026 թվականի N 190-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻՄԻՐՅԱԶԵՎԻ ՓՈՂՈՑԻ № 57 ՀԱՍՑԵԻ
ՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 104.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ
ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիմիրյազևի փողոցի № 57 հասցեի բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Ալինա Արտուշի (1/5 մաս), Վարդան Վարազդատի (2/5 մաս), Մացակ Վարազդատի (1/5 մաս), Վարդուշ Վարազդատի (1/5 մաս) Գևորգյանների (հիմք՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական N 017087 և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր N581 տրված 2023թվականի օգոստոսի 11-ին):

Քաղաքացի Վարդան Գևորգյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող, Գյումրի քաղաքի Տիմիրյազևի փողոցի № 57 բնակելի տան պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 104.5 (մեկ հարյուր չորս ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, հնարավոր չէ օտարել աճուրդով, որպես առանձին գույքային միավոր, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 03-ի № 151-Ա որոշումը և քաղաքացի Վարդան Գևորգյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի սեպտեմբերի 26-ին № 14679 թվագրմամբ):

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

- Քաղաքացիներ Ալինա Արտուշի (1/5 մաս), Վարդան Վարազդատի (2/5 մաս), Մացակ Վարազդատի (1/5 մաս), Վարդուշ Վարազդատի (1/5 մաս) Գևորգյանների ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող Գյումրի քաղաքի Տիմիրյազևի փողոցի № 57 հասցեի բնակելի տան պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 104.5 (մեկ հարյուր չորս ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, որպես ընդհանուր բաժնային սեփականություն:
- Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 1098713 (մեկ միլիոն իննսուներեք հազար յոթ հարյուր տասներեք) Հայաստանի Հանրապետության դրամ:
- Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
- Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացիներ Ալինա, Վարդան, Մացակ, Վարդուշ Գևորգյանների միջոցների հաշվին:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Վարդան Գևորգյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք.Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 26 » հունիսի 2026 թվականի № 189-Ա

ՔԱՂԱՔ ԳՅՈՒՄՐԻ, ՄԱՆՈՒՇՅԱՆ ՓՈՂՈՑ 2/8 (ՎԿԱՅԱԿԱՆ №18062025-08-0026),
Մ. ՄԱՆՈՒՇՅԱՆ ՓՈՂՈՑ 2/23 (ՎԿԱՅԱԿԱՆ №17042024-08-0004) ԵՎ Մ. ՄԱՆՈՒՇՅԱՆ ՓՈՂՈՑ
2/24 (ՎԿԱՅԱԿԱՆ №29122025-08-0019) ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի
35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով,
Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն
որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով
քաղաքացի Դավիթ Ասատրյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու
համայնքապետարանում մուտքագրված №537-2026թվագրմամբ)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաք Գյումրի, Մանուշյան փողոց 2/8 (վկայական №18062025-08-0026), Մ. Մանուշյան փողոց
2/23 (վկայական №17042024-08-0004) և Մ. Մանուշյան փողոց 2/24 (վկայական №29122025-08-0019)
անշարժ գույքերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մ. Մանուշյան փողոց, 2/8 բնակելի տուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

2026 թ. ք. Գյումրի



miD

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՌԱԶՄԻԿ ԱՐՄԵՆԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ
ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«26» հունվարի 2026 թվական N 188 - Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2026 թվականի հունվարի 22-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Ռազմիկ Արմենի Գալստյան (ՀԾՀ 3609000189, հասցե՝ ք.Գյումրի, Ղուկասյան փողոց, տուն 16) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ
ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Ռազմիկ Արմենի Գալստյանին պատկանող BMW X5 4.4 I մակնիշի 37RS252 պետհամարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի գծով պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է գույքահարկի 2023-2025 թվականների չվճարված հարկից (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի

եկամուտների հավաքագրման բաժնի տեղական հարկերի և վճարների միասնական համակարգ կողմից տրամադրված տեղեկանքը):

Փոխադրամիջոցի գույքահարկի գծով վճարման ենթակա գումարը 2025 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի համաձայն հարկային պարտավորությունները կազմել են՝ 489.672 (չորս հարյուր ութսունինը հազար վեց հարյուր յոթանասուններկու) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 406.875 (չորս հարյուր վեց հազար ութ հարյուր յոթանասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամը, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 82.797 (ութսուններկու հազար յոթ հարյուր իննսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ գումար:

3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

Օրենսգրքի 239-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի:

Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ ենթակետի «ա» և «բ» կետի համաձայն՝ իրականացնում են հարկ վճարողների և փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով,

Իրականացնում են փոխադրամիջոցների գույքահարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ հարկային պարտավորությունը փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտ են համարվում հետևյալ փոխադրամիջոցները.

Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը.

Օրենսգրքի 243-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ): Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Օրենսգրքի 246 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունն առաջանում է փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման (հարկային պարտավորությունների առաջացման) համար հիմք են համարվում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:

Օրենսգրքի 247 հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:

Օրենսգրքի 251 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված դեպքերում և կարգով հաշվարկված գույքահարկի պարտավորության գումարները) իրենց պետական գրանցման (հաշվառման) վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները: Հաշվառման (գրանցման) վայրի բացակայության դեպքում ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն մասում նշված գումարները վճարում են իրենց հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն հոդվածում նշված գումարները վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4) տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, 239-րդ հոդվածի 1-ին մասի, 240-րդ հոդվածի 1-ին մասի, 241-րդ հոդվածի 2-րդ ենթակետի «ա» և «բ» կետի, 242-րդ հոդվածի 1-ին մասի, 243-րդ հոդվածի 1-ին մասի, 246-րդ հոդվածի 1-ին մասի, 247-րդ հոդվածի, 251-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդված 1-ին մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 55-րդ, 56-րդ հոդվածների, 58-րդ հոդվածի 1-

ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 88-րդ հոդվածի դրույթներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Քաղաքացի՝ Ռազմիկ Արմենի Գալստյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել 489.672 (չորս հարյուր ութսունինը հազար վեց հարյուր յոթանասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 406.875 (չորս հարյուր վեց հազար ութ հարյուր յոթանասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամը, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 82.797 (ութսուներկու հազար յոթ հարյուր իննսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ գումար:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Ռազմիկ Արմենի Գալստյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ռազմիկ Արմենի Գալստյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝



տուժ

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թվական, ք Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 23 » հունվարի 2026 թվականի N 187 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱԴՐԵՏԻ 2010
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 2698-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հինք ընդունելով քաղաքացի Սմբատ Հակոբյանի լիազորված անձ՝ Մկրտիչ Հովսեփյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի դեկտեմբերի 08-ին N 18945 թվագրմամբ)՝ որոշում եմ.

1. Ուժը կորցրած ճանաչել 2010 թվականի հոկտեմբերի 15-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի «Քաղ-ներ Սմբատ և Լիանա Հակոբյաններին, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Հաղթանակի պող. 42 շենք N 8 հասցեով առևտրի և սպասարկման սրահին կից նախամուտք տեղադրելու նպատակով Հաղթանակի պող. N 42/3 հասցեով 17,12 քառ.մ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու և սրահի 2 պատուհանները դռան վերափոխելու թույլտվության մասին » N 2698-Ա որոշումը:
2. Լուծել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 2010 թվականի նոյեմբերի 04-ի (գրանցված սեղանամատյանում N 7270) պայմանագիրը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե N 15102025-08-0069 վկայականը չեղարկելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սմբատ Հակոբյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝



2025-01-23 10:24:49 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից



Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 23 » հունվարի 2026 թվականի N 186-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՅՈՒԴՈՅԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ
ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության ծյուղոյի պատանիների 2026 թվականի հունվարի 31-ից փետվարի 1-ը Չարենցավան համայնքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով ծյուղոյի ֆեդերացիայի 2026 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2026 թվականի հունվարի 23-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության ծյուղոյի պատանիների առաջնությանը գործողման ծախսերի 2026 թվականի հունվարի 31-ից փետվարի 1-ը Չարենցավան համայնք գործողել 4 մարզիկի և 1 մարզիչի, գործողման ծախսերի համար հատկացնել (միայն ճանապարհածախս) 20.000(քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ գործողման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործողումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
2026 թ. ք.Գյումրի

մԻԾ

Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրիի համայնքի ղեկավարի 2026 թ.
հունվարի 23-ը N 188-Ն որոշման



Հայաստանի Հանրապետության ձյուդոյի պատանիների առաջնությանը մասնակցող
Գյումրու հավաքական թիմի անդամների

Թիվ	Ազգանուն	Անուն	Մարզիկ /մարզիչ	Անձնագիր	Սոցքարտ	Հաշվեհամար	Գումար
1.	Գրիգորյան	Դանիել	մարզիկ	AX0564851	3025100702	1930097978568700	4.000
2.	Տերտերյան	Հարություն	մարզիկ	AL0306030	1727090187	1570099178140200	4.000
3.	Տերտերյան	Հովհաննես	մարզիկ	AT0611599	3803960266	1570096086370800	4.000
4.	Շահինյան	Վիրապ	Մարզիկ	AX0302824	1931100535	24100691537500	4.000
5.	Հովհաննիսյան	Գևորգ	մարզիչ	AO0378869	2111630233	163005962226	4.000
Ընդամենը							20.000



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 23 » հունվարի 2026 թվականի N 185 Ա
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա.
ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ N 11/35 ՀԱՍՑԵԻ 337,3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿ-4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ
ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ա. Շիրակացու փողոց N 11/35 հասցեի հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Հմայակ Մինասյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 29082025-08-0043 վկայական):

Քաղաքացի Հմայակ Մինասյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Ա. Շիրակացու փողոց N 11/35 հասցեի 337,3 (երեք հարյուր երեսունյոթ ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու միջոցով Գյումրի քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխանացնելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով վերոհիշյալ հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության հողամաս և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով Հմայակ Մինասյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի դեկտեմբերի 12-ին N 19150 թվագրմամբ):

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Գյումրի քաղաքի Ա. Շիրակացու փողոց N 11/35 հասցեի 337,3 (երեք հարյուր երեսունյոթ ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու միջոցով համապատասխանացնել Գյումրի քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Հմայակ Մինասյանին և Մարինե Մինասյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

2026 թ. ք.Գյումրի



Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ



23

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Գաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 23 >> 2026 թվականի N 184-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի N 75-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին>> օրենքի 1.2-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողի 2026 թվականի հունվարի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Հուստ առաքատ- մսուր մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Կրասնիկի Մարկոսյանին ամենամյա երկարացված արձակուրդ տրամադրելու մասին >> N 75-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 2-րդ կետի <<4>> թիվը փոխարինել <<5>> թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարինե Կրասնիկի Մարկոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ



[Handwritten signature]

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

2026-01-23 17:06:08 G:\IT-4
Հայաստանի Հանրապետության
Գյումրի քաղաքի Գյումրի համայնքի

miD

Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ք. Գյումրի



23

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 23 >> Խո Շախաթ 2026 թվականի N 183-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 5-Ի N 1-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին>> օրենքի 1.2-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողի 2026 թվականի հունվարի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի օգնական Հովհաննես Սուրենի Կարապետյանին ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին>> N 1-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 2-րդ կետի <<10>> թիվը փոխարինել <<11>> թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովհաննես Սուրենի Կարապետյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝
Բ.Գյումրի



Handwritten signature



Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 23 » *հունվարի* 2026 թվականի N 182-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ որոշում եմ.

1. Լուծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի նոյեմբերի 07-ի N 2693-Ա որոշման հիման վրա կազմված անշարժ գույքի առուվաճառքի 2025 թվականի դեկտեմբերի 03-ի (գրանցված գրանցամատյանում N 6357) թիվ 2693 պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սիրիկ Հովհաննեսի Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

2026 թ. ք. Գյումրի



2026-01-22 16:46:05 GMT+4
Համապատասխան է էԿԵՆԳ-ի կողմից

miD

Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 23 >> 2026 թվականի N 181 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի N 74-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունվարի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի համակարգող հանձնաժողով ստեղծելու, նրա գործառույթները սահմանելու, առաջարկների ներկայացման հայտի և նախնական գնահատման աղյուսակի ձևանմուշները սահմանելու մասին>> 74-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

2) որոշման Հավելված 4-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին հանձնաժողովին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԽՈՂ՝



Ստորագրող
ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ
3910850278

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ.
թ. Գյումրի



Հավելված 1
Հաստատված է
Գյումրի համայնքի ղեկավարի
<<23>> հունվարի 2026 թվականի
N 181-Վ որոշմամբ

Գյումրի համայնքի ղեկավարի
<<15>> հունվարի 2026 թվականի
N 74-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅԻ

N	Մասնակցային բյուջետավորման իրականացման փուլ	Միջոցառում (նկարագրել իրականացվելիք գործողությունները)	Պատասխանատու և եվ կատարողներ	Աջակցող թիմակիցներ	Ժամկետներ
1	Նախապատրաստական փուլ	Համապատասխան փաստաթղթերի կազմում և հաստատում մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման մշտական հանձնաժողովի նսիտի հրավիրում	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողովի քարտուղար, մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողովի նախագահ		19.01.2026թ. - 21.01.2026թ.
2	Իրազեկման փուլ	Գյումրի համայնքի 2026 թվականի մասնակցային բյուջետավորման նախագծի հայտերի, ձևաչափերի, ծրագրերի և դրանց հիմնավորումների ներկայացում, հրապարակում, հանրային իրազեկումներ՝ տեղեկատվություն նախատեսվող գործընթացների, միջոցառումների, թիրախային ոլորտների/ծրագրերի, շահառուների, ժամկետների, վայրերի, հանրության, մասնակցության ձևերի, ինչպես նաև կոնտակտային անձանց և միջոցների վերաբերյալ:	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողով	ՀԿ կենտրոն	21.01.2026թ. - 30.01.2026թ.
3	Առաջարկների ներկայացման փուլ	Քաղաքացիների կողմից առաջարկ-ծրագրերի ներկայացում	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողովի քարտուղար		02.02.2026թ. - 10.02.2026թ.
4	Առաջարկների նախնական	Հայտերի՝ առաջարկ-ծրագրերի հավաքագրում, ամփոփում,	Մասնակցային բյուջետավորման		10.02.2026թ. - 12.02.2026թ.

	գնահատման փուլ	առաջարկների ցանկի կազմում, նախնական գնահատում՝ յուրաքանչյուր առաջարկի համապատասխանությունը սահմանված չափանիշներին:	կառավարման հանձնաժողով		
5	Հանրային քննարկումների և լսումների փուլ	Մահմանված չափանիշներին համապատասխանող առաջարկների ներկայացումը հանրությանը հանրային լսումների ու քննարկումների միջոցով	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողով		12.02.2026թ. - 15.02.2026թ.
6	Քվեարկության փուլ	Մահմանված չափանիշներին համապատասխանող առաջարկ-նախագծերի հանրային քննարկումներ: Քվեարկության փուլ անցած առաջարկների վերբեռնում համայնքապետարանի պաշտոնական կայքում/բաժնում՝ քվեարկության համար: Համայնքի ղեկավարի կողմից առաջարկների հասանելիության և քվեարկելու իրավասության ապահովում միայն համայնքի բնակիչների կողմից:	Համայնքապետարանի ցանցային ադմինիստրատոր	«Տեղեկատվական համակարգերի զարգացման եվ վերապատրաստման կենտրոն» ՀԿ	15.02.2026թ. - 25.02.2026թ.
7	Իրականացման փուլ	Հանձնաժողովի կողմից ընտրված առաջարկի մշակում և սուբվենցիոն հայտի ներկայացում: Ֆինանսատնտեսագիտական բաժնի կողմից աշխատանքների իրականացման համար գնման ընթացակարգերի իրականացում	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողով, Ֆինանսատնտեսագիտական բաժին		05.04.2026թ., Հայտի հաստատումից մինչև 20.12.2026թ.
8	Հաշվետվության փուլ	Մասնակցային բյուջետավորման գործընթացի մասին հանձնաժողովի կողմից հաշվետվության ներկայացում համայնքի ղեկավարին, որն իր մեջ պետք է ընդգրկի հաշվետվություն իրազեկման արշավի մասին, առաջարկների ներկայացման և նախնական ընտրության մասին, քվեարկության արդյունքների մասին, առաջարկի իրականացման մասին:	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողովի նախագահ		30.12.2026թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gymri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 23 » հունիսի 2026 թվականի N 180-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 30.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 9.36 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (6.85 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 30.2 (երեսուն ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 9.36 (ինն ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (6.85(վեց ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություններ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝ հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 20236QLKTR ծածկագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 30.2 (երեսուն ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 9.36 (ինն ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (6.85(վեց ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Օհանյան Նապոլեոնի Պողոսյանին:

3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:

4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

2026-06-23 10:25:59 ՀԱՄԻԷ
Հանրապետության է-ԼՈՒՆԵԼԻ-Գ-ի կողմից



Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք.Գյումրի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 22 » հունվարի 2026 թվականի N 149-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՍԿԵՏԲՈՒՄ-12 ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ 2025-2026
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՏՈՒՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-12 տարեկան պատանիների 2025-2026 թվականների առաջնության 2026 թվականի հունվարի 27-ին Երևան քաղաքում կայանալիք հերթական տուրին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով բասկետբոլի ֆեդերացիայի 2026 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2026 թվականի հունվարի 22-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-12 տարեկան պատանիների 2025-2026 թվականների առաջնության հերթական տուրին գործուղման ծախսերի 2026 թվականի հունվարի 27-ին Երևան քաղաք գործուղել 12 մարզիկի և 1 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (միայն ճանապարհածախս և սնունդ) 82.700(ութսուններկու հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ



[Handwritten signature]

միժ

Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝
2026 թ. ք.Գյումրի

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թ.
հունիսի 22-ի N 179-Ն որոշման



Հայաստանի Հանրապետության բնակչության Մ-12 տարեկան պատանիների 2025-2026 թվականների առաջնության հերթական տուրին մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների

[illegible]



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 22 » հունվարի 2026 թվականի N 178 - Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՆԱՀՈՈՄԵԱԿԱՆ ԸՄԲՋԱՄԱՐՏԻ՝ ԼԵՈՆ ՇԱՂՈՅԱՆԻ
ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՈՒՇԱՄՐՅԱՇԱՐԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ
ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության հունահռոմեական ըմբշամարտի Լևոն Շաղոյանի հիշատակին նվիրված 2026 թվականի հունվարի 31-ից փետրվարի 2-ը Վաղարշապատ համայնքում կայանալիք միջազգային հուշամրցաշարին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով հունահռոմեական ըմբշամարտի ֆեդերացիայի 2026 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2026 թվականի հունվարի 22-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության հունահռոմեական ըմբշամարտի՝ Լևոն Շաղոյանի հիշատակին նվիրված միջազգային հուշամրցաշարին գործուղման ծախսերի 2026 թվականի հունվարի 31-ից փետրվարի 2-ը Վաղարշապատ համայնք գործուղել 25 մարզիկի և 5 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (բոլոր ծախսերը) 699.000(վեց հարյուր ինսունինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ**



☒ Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝
2026 թ. ք.Գյումրի

Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278

Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026թ.
հունվարի 22-ի N 148-Ճ որոշման



Հայաստանի Հանրապետության հունահռոմեական ըմբշամարտի՝ Լևոն Շաղոյանի հիշատակին նվիրված միջազգային հուշամրցաշարին մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների

[illegible]



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 22 » հունվար 2026 թվականի N 177-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԹԼԵՏԻԿԱՅԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԲԱՅ
ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

